ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՁՕՐԱՎԻԳ ԳԵՏԱՇԷՆԻՆ

Լիբանանի հայութիւնը իր քաղաքական կազմակերպութիւններով եւ բազմահազար հայորդիների մասնակցութեամբ իր ձայնը միացրեց հայրենի Արցախի եւ արտերկրի հայութեան ձայներին դատապարտելու Գետաշէնում, Արցախում եւ այլ շրջաններում վերջին օրերին տեղի ունեցած ազերիների բռնարարքները եւ նրանց զօրավիգ կանգնող խորհրդային պաշտօնական ուժերը:

Մայիսի երեքին, երեկոյեան, Բուրջ Համուդի Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարանի բակում տեղի ունեցաւ երիտասարդական եւ ժողովրդական հաւաք: Ներկայ էին միջազգային լրատու գործակալութիւններից **CNN, CBN, VILNEWS, CBS, ABC, WTN,** եւ տեղական պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի կայանների թղթակիցներ, ինչպէս նաեւ մամլոյ ներկայացուցիչներ:

Յաջորդաբար խօսք առան Լիբանանի հայ կուսակցութիւնների երիտասարդական եւ ուսանողական միութիւնների ներկայացուցիչները:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ ընկ. Յակոբ Բագրատունին: Խօսքի աւարտին նա հաստատեց, թէ Գետաշէնի, Մարտունաշէնի եւ ամբողջ Արցախի դէմ ուղղուած յարձակումը յարձակում է Հայաստանի դէմ:

Ձեռնարկի փակումից առաջ, հաւաքի անունից կարդացուեց բողոքի եւ ընդվզումի հեռագրեր ուղղուած Խորհրդային Միութեան նախագահ Մ. Գորբաչովին, ՄԱԿի ընդհանուր քարտուղար Պերես դէ Կուէլեարին եւ Եւրոպական Համայնքների Յանձնաժողովի նախագահ Ժաք դէ Լորին: